ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 210 էջ:

Հարավային Կովկասում Թուրքիայի վարած քաղաքականության նպատակի, բնույթի և խնդիրների պարզաբանումն անմիջական կապ ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հիմնահարցի հետ: Այս առումով հասկանալի է դառնում խնդրի լուսաբանման կարևորությունը հայկական քաղաքական և պատմական մտքի տեսակետից: Ընդ որում, այլազգի մասնագետների համեմատությամբ՝ հայ թուրքագետի համար անաչառ, բազմակողմանի գիտական ուսումնասիրություն կատարելն առավել դժվար է՝ հաշվի առնելով պատմական հիշողության հետ կապված բարդույթները: Հարավային Կովկասում Թուրքիայի վարած քաղաքականության պարզաբանմանը նվիրված մի շարք աշխատություններ աչքի են ընկնում իրենց հայամետ մոտեցմամբ, և այդ ուսումնասիրությունները չի կարելի անվանել անկողմնակալ և ընդգրկուն:

Գրիգոր Արշակյանը բազմակողմանի և բազմալեզու աղբյուրների (որոնց զգալի մասը թուրք հեղինակների աշխատություններ են), ինչպես նաև պարբերական մամուլի գիտական վերլուծության հիման վրա փորձում է օբյեկտիվ և հավասարակշռված գիտական աշխատություն գրել: Հեղինակը Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունն ուսումնասիրում է մի քանի հայեցակետերով, ինչը նրան թույլ է տալիս խնդիրը ներկայացնել ամենայն մանրամասնությամբ՝ միաժամանակ չկորցնելով հիմնական գիծը, այն է՝ Թուրքիան այս տարածաշրջանում ինչ շահեր և ինչ միջոցներ ու հնարավորություններ ունի այդ շահերը կյանքի կոչելու համար:

Անշուշտ, 2003 թ. իսլամամետ «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալուց հետո Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունում մարտավարական փոփոխություններ են արվել, և դրանց արդյունքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն է: Սակայն ռազմավարական առումով Թուրքիայի քաղաքական գիծը տարածաշրջանում ուղենշվել է 1991-2001 թթ. և շարունակում է անփոփոխ մնալ, այսինքն՝ հարավկովկասյան քաղաքականության առանցքը հիմնվում է թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական ռազմավարական համագործակցության վրա: Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական դաշինքն Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը ձևավորել է որպես «մեկ ազգ - երկու պետություն», և ներկայումս Թուրքիայի քաղաքական շրջանակների համար շատ դժվար է ձերբազատվել այդ

սկզբունքից ու կարգախոսից: Գ. Արշակյանը ներկայացնում է նաև մեծ պետությունների շահերի բախումը Հարավային Կովկասի տարածաշրջանում, և թե ինչպես է թուրքական դիվանագիտությունը օգտագործում այդ հանգամանքը: Սա կարևոր է Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ թուրքական ուղղության մշակումների և վերլուծությունների համար:

Գ. Արշակյանի գիրքը կարևոր ներդրում է հայրենական թուրքագիտության բնագավառում. այն, անշուշտ, մեծ հետաքրքրություն կառաջացնի ոչ միայն մասնագետների, այլև ընթերցողների լայն շրջանում:

ԱՎԱԳՅԱՆ Ա. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր